ՋԱՎԱԽԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ

Վրաստանի Սամցխե-Ջավախք նահանգի հայ բնակչության կրթական հիմնախնդիրների բարելավման ուղղությամբ պետական մակարդակով լուրջ քայլեր չեն ձեռնարկվում: Կարելի է ասել՝ այդ համակարգն անհրաժեշտ պետական աջակցության բացակայության պատճառով զգալիորեն քայքայվել է:

Ջավախահայությունը՝ կրթական լրջագույն խնդիրների առջև

Վրաստանի կրթական նոր օրինագծի համաձայն, երկրում գործող բոլոր պետական դպրոցներում հիմնական առարկաների դասավանդումը նախատեսվում է իրականացնել վրացերենով: Ոչ վրացական (տվյալ դեպքում՝ հայկական) դպրոցներում մայրենի լեզվով են դասավանդվելու միայն հայոց լեզու և հայ գրականություն առարկաները: Այս ուսումնական տարվանից դպրոցական ծրագրերում նույնիսկ չեն ընդգրկվել ֆակուլտատիվ դասաժամերը: Եվ քանի որ հայոց պատմության հաստատագրված դասաժամեր հայտնի պատճառներով չեն հատկացվում, իսկ այդ առարկայի դասավանդումը հնարավոր էր միայն ի հաշիվ ֆակուլտատիվ դասաժամերի, ուստի և սրանց վերացումով հայ դպրոցականները փաստորեն զրկվում են սեփական ժողովրդի պատմությունը դպրոցում սովորելու հնարավորությունից: Մեծ հուզում է առաջ բերել նաև վրացական ծրագրերով կազմված ութերորդ դասարանի աշխարհագրության դասագրքում հայերի՝ իրանական լեզվաընտանիքին պատկանելու հակագիտան «տեսությունը»:

Վիճակագրական տվյալները ցույց են տալիս, որ նոր ուսումնական տարում Ջավախքի դպրոցների առաջին դասարանցիների թվաքանակը նվազել է: Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջաններում առաջին դասարան են հաճախել՝ համապատասխանաբար 943 և 460 աշակերտ, 2003թ.՝ համապատասխանաբար 1.098 և 478, իսկ 10 տարի առաջ՝ 1.880 և 581: Պարզվում է՝ 10 տարվա ընթացքում Ախալքալաքի շրջանի առաջին դասարանցիների թիվը նվազել է ավելի քան 900-ով, որից 155-ը՝ վերջին մեկ տարում, իսկ Նինոծմինդայի շրջանում՝ 121-ով (18-ը՝ կրկին վերջին մեկ տարում):

Ախալքալաքի շրջան

Ախալքալաքի 64 գյուղերում ներկայում գործում են 58 հայկական դպրոց. 46-ը միջնակարգ են, 11-ը՝ ոչ լրիվ միջնակարգ (ութամյա), 1-ը՝ տարրական: Ախալքալաքի

հայկական դպրոցներն ունեն 9.153 աշակերտ *(տե՛ս Հավելված № 1):* Վիճակագրությունը ցույց է տալիս, որ Ախալքալաքի շրջանի հայկական դպրոցներում սովորող աշակերտների թվաքանակը նվազման միտում ունի: 2004թ. վիճակագրական ցուցանիշների համաձայն, Ախալքալաքի շրջանի հայկական դպրոց հաճախող առաջին դասարանցի 6-7 տարեկան երեխաների թիվը՝ ծնված 1997-1998թթ., եղել է ընդամենը 796, իսկ 11-րդ դասարանցիներինը (ծնված 1987թ.)՝ 963: Աշակերտների միջին թվային հարաբերակցության համար պայմանական միջին սանդղակ ընտրելով «880» ցուցանիշը՝ ստանում ենք հետևյալ պատկերը. «880»-ից ցածր են գտնվում 10-րդ, 9-րդ, 6-րդից 1-ին դասարանները: Սա վկայում է, որ Ախալքալաքի շրջանի հայ բնակչության սոցիալ-տնտեսական ծանր պայմանները նպաստում են ոչ միայն շրջանից հայերի արտահոսքին դեպի Ռուսաստան, այլ նաև զգալիորեն նվազեցնում են ծնելիության տոկոսային հարաբերակցությունը:

Ախալքալաքի շրջանի 1-11-րդ դասարանների աշակերտների հարաբերակցությունը (2004թ. վիճակագր. տվյալներով)[1]

I	6-7 տարեկան	1997-1998թթ. ծնված	**796**
II	8 տարեկան	1996թ.	**686**
III	9 տարեկան	1995թ.	**667**
IV	10 տարեկան	1994թ.	**725**
V	11 տարեկան	1993թ.	**835**
VI	12 տարեկան	1992թ.	**875**
VII	13 տարեկան	1991թ.	**963**
VIII	14 տարեկան	1990թ.	**941**
IX	15 տարեկան	1989թ.	**850**
X	16 տարեկան	1988թ.	**852**
X I	17 տարեկան	1987թ.	**963**

Ախալցխայի շրջան

2004թ. վիճակագրությամբ Ախալցխայի շրջանում գործում են հայկական 18 դպրոց. 15-ը միջնակարգ են, 3-ը՝ ոչ լրիվ (թերի) միջնակարգ: Հայկական դպրոցներում սովորում են 2.299 աշակերտ *(տե՛ս Հավելված № 2):* 2004թ. ցուցանիշներն արձանագրում են, որ շրջանի հայկական դպրոցներ հաճախող աշակերտների թիվը կրկին նվազման միտում ունի: Այսպես, 1988-1993թթ. ծնված 5-10-րդ դասարանցիների քանակը չի իջնում պայմանական «200 աշակերտ» ցուցանիշից: Այլ է ցուցանիշը 4-րդ, 2-րդ և 1-ին դասարանների պարագայում. համապատասխանաբար՝ 188, 180 և 147 աշակերտ:

[1] ՀՀ Կրթության և գիտության նախարարության Սփյուռքի բաժնի տվյալների համաձայն:

Ախալցխայի շրջանի 1-11-րդ դասարանների աշակերտների հարաբերակցությունը (2004թ. վիճակագր. տվյալներով)

I	6-7 տարեկան	1997-1998թթ. ծնված	**147**
II	8 տարեկան	1996թ.	**180**
III	9 տարեկան	1995թ.	**225**
IV	10 տարեկան	1994թ.	**188**
V	11 տարեկան	1993թ.	**218**
VI	12 տարեկան	1992թ.	**203**
VII	13 տարեկան	1991թ.	**239**
VIII	14 տարեկան	1990թ.	**240**
IX	15 տարեկան	1989թ.	**277**
X	16 տարեկան	1988թ.	**208**
X I	17 տարեկան	1987թ.	**174**

Ընդ որում, վերոնշյալ աղյուսակներից կարելի է ենթադրել, որ թե՛ Ախալքալաքի և թե՛ Ախալցխայի հայկական դպրոցներում սովորող աշակերտների թիվը բարձր է եղել հիմնականում 1988-1993թթ.:

Նինոծմինդայի շրջան

2004թ. վիճակագրական տվյալների համաձայն, Նինոծմինդայի շրջանում գործում են 32 հայկական դպրոց. 22-ը միջնակարգ են, 9-ը՝ ոչ լրիվ միջնակարգ, 1-ը՝ տարրական: 2000թ. տվյալներով, շրջանի հայկական դպրոցներում սովորողների ընդհանուր թվաքանակը կազմել է 5.775 աշակերտ:

Նինոծմինդայի շրջանի միջնակարգ դպրոցները

№	դպրոց	աշակերտ
1	Նինոծմինդայի թիվ 1 միջն. դպրոց	**483**
2	Նինոծմինդայի թիվ 3 միջն. դպրոց	**250**
3	Դիլիֆի միջն. դպրոց	**243**
4	Մեծ Գոնդուրայի միջն. դպրոց	**250**
5	Մամզարայի միջն. դպրոց	**233**
6	Փ. Գոնդուրայի միջն. դպրոց	**143**
7	Ղուլալիսի միջն. դպրոց	**95**
8	Ջիգրաշենի միջն. դպրոց	**221**
9	Հեշտիայի Վ. Հովսեփյանի անվ. թիվ 1 միջն. դպրոց	**238**
10	Հեշտիայի թիվ 2 միջն. դպրոց	**295**
11	Ուչմանայի միջն. դպրոց	**89**
12	Թորիայի միջն. դպրոց	**124**
13	Փոքր Խանչալի միջն. դպրոց	**140**
14	Մեծ Խանչալի միջն. դպրոց	**314**
15	Օրոջալարի միջն. դպրոց	**266**
16	Սաթխայի միջն. դպրոց	**378**
17	Մեծ Արագյալի միջն. դպրոց	**227**

№	դպրոց	աշակերտ
18	Գանձայի Վ. Տերյանի անվ. թիվ 1 միջն. դպրոց	356
19	Գանձայի թիվ 2 միջն. դպրոց	397
20	Փոքայի միջն. դպրոց	271
21	Գորելովկայի միջն. դպրոց	166
22	Ժդանովականի (Ժդանովկա) միջն. դպրոց	159
ընդամենը		5.338

Ոչ լրիվ միջնակարգ և տարրական դպրոցներ

№	դպրոց	աշակերտ
1	Ղաուրմայի ոչ լրիվ միջն. դպրոց	63
2	Կաթնատուի ոչ լրիվ միջն. դպրոց	53
3	Փոքր Արագյալի ոչ լրիվ միջն. դպրոց	102
4	Սաղամոյի ոչ լրիվ միջն. դպրոց	25
5	Վլադիմիրովկայի ոչ լրիվ միջն. դպրոց	20
6	Ռադիոնովկայի ոչ լրիվ միջն. դպրոց	63
7	Սպասովկայի ոչ լրիվ ռուս-հայկական միջն. դպրոց	17
8	Եֆրեմովկայի ոչ լրիվ ռուս-հայկական միջն. դպրոց	46
9	Օռլովկայի ոչ լրիվ ռուս-հայկական միջն. դպրոց	32
10	Ասփարայի տարրական դպրոց	16
ընդամենը		437

Նինոծմինդայի շրջանի հայկական այն դպրոցները, որոնց աշակերտների թվաքանակը չի գերազանցում պայմանական «100 աշակերտ» միջին սանդղակը

№	դպրոց	աշակերտ
1	Ուչմանայի միջն. դպրոց	89
2	Ղուլալիսի միջն. դպրոց	95
3	Սաղամոյի ոչ լրիվ միջն. դպրոց	25
4	Վլադիմիրովկայի ոչ լրիվ միջն. դպրոց	20
5	Ռադիոնովկայի ոչ լրիվ միջն. դպրոց	63
6	Սպասովկայի ոչ լրիվ ռուս-հայկական միջն. դպրոց	17
7	Եֆրեմովկայի ոչ լրիվ ռուս-հայկական միջն. դպրոց	46
8	Օռլովկայի ոչ լրիվ ռուս-հայկական միջն. դպրոց	32
9	Ղաուրմայի ոչ լրիվ միջն. դպրոց	63
10	Կաթնատուի ոչ լրիվ միջն. դպրոց	53
11	Ասփարայի տարրական դպրոց	16

Աղյուսակում ներկայացված 11 դպրոցների մեծամասնությունը ոչ լրիվ միջնակարգ են (8 դպրոց), 2-ը՝ միջնակարգ և 1-ը՝ տարրական։

Ծալկայի շրջան

Թեև Ծալկան վարչական տեսանկյունից չի ընդգրկվում Սամցխե-Ջավախք նահանգում, այնուհանդերձ, նպատակահարմար է ներկայացնել նաև այս շրջանի հայկական դպրոցների ընդհանուր վիճակագրական տվյալները։ Ծալկայի շրջանում ներկայում գործում են 11 հայկական դպրոց, որոնցում ընդհանուր առմամբ սովորում են 1.488 աշակերտ։

Ծալկայի շրջան

№	գյուղեր	աշակերտների թիվը	ուսուցիչների թիվը
1	Ղզլլքիլիսա	254	30
2	Չիֆթքիլիսա	100	9
3	Տամալա-Խարաբա	7	1
4	Նարդևան	199	17
5	Դարագյուղ	128	18
6	Բուռնաշեթ	99	12
7	Օզնի	141	18
8	Աշխալա	198	25
9	Այազմա	149	17
10	Ղուշչի	117	16
11	Ղաբուռ	96	11
ընդամենը		**1.488**	**174**

Ծալկայի շրջանի հայկական այն դպրոցները, որոնց աշակերտների թվաքանակը չի գերազանցում պայմանական «100 աշակերտ» միջին սանդղակը

№	գյուղ	աշակերտների թիվը
1	Տամալա-Խարաբա	7
2	Բուռնաշեթ	99
3	Ղաբուռ	96
ընդամենը		**202**

Ծալկայի շրջանի Տամալա-Խարաբա հայկական գյուղի դպրոցում ուսանող ընդամենը 7 աշակերտին դասավանդում է 1 ուսուցիչ:

Սամցխե-Ջավախք նահանգի մյուս շրջաններում գործող հայկական դպրոցների պատկերը հետևյալն է. Բորժոմի շրջանում գործում են 4 հայկական դպրոց՝ ընդհանուր առմամբ 283 աշակերտով, Ասպինձայի շրջանում՝ 1 հայկական դպրոց՝ 417 աշակերտով, իսկ Ադիգենում՝ համապատասխանաբար 1 և 46[1]:

Հետևություններ

- Ջավախքի կրթական համակարգը գտնվում է ծանր պայմաններում, անհրաժեշտ միջոցների բացակայության պատճառով այն տարեցտարի կազմալուծվում է, և ջավախահայության կրթական մակարդակը անհրաժեշտ աջակցության բացակայության հետևանքով աստիճանաբար հետաճ է ապրում,
- Ջավախքի հայ բնակչության կրթական հիմնախնդիրները զգալիորեն նպաստում է շրջանից հայության արտագաղթին,

[1] Տե՛ս նաև Հավելված # 3:

- կրթական ոլորտի բարելավմանն ուղղված պետական միջոցների բացակայությունը խոչընդոտում է Ջավախքի՝ Վրաստանի այլ շրջանների հետ ինտեգրման գործընթացին, սերմանում անվստահություն վրացական ղեկավարության նկատմամբ,
- առաջիկայում կանխատեսելի է կենտրոն-մարզ հարաբերություններում Թբիլիսիի քաղաքականության կոշտացում, որը կարող է Ջավախք-կենտրոն փոխհարաբերություններում լարվածության նոր պատճառ հանդիսանալ։

Հավելված № 1

Ախալքալաքի շրջանի միջնակարգ դպրոցները

№	դպրոց	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	ընդամենը
1	Ախալքալաքի թիվ 1 միջն. դպրոց	35	34	43	37	45	53	62	83	52	65	83	**592**
2	Ախալքալաքի թիվ 4 միջն. դպրոց	36	19	35	22	52	50	51	56	47	50	68	**486**
3	Ախալքալաքի թիվ 5 միջն. դպրոց	14	12	9	9	14	6	10	26	19	22	20	**161**
4	Ալասթանի միջն. դպրոց	12	5	14	9	6	9	12	6	10	18	18	**119**
5	Ալասթումանի միջն. դպրոց	12	10	12	11	10	10	14	11	12	13	13	**128**
6	Ազավրեթի միջն. դպրոց	29	23	21	21	22	17	23	24	23	19	21	**243**
7	Արագվի միջն. դպրոց	12	15	10	12	18	18	13	14	16	18	27	**173**
8	Աբուլի միջն. դպրոց	10	9	6	12	8	12	6	9	8	16	8	**104**
9	Ազանայի միջն. դպրոց	22	16	11	14	16	17	16	11	10	16	14	**163**
10	Բարալեթի միջն. դպրոց	13	12	12	9	16	9	12	9	13	9	16	**130**
11	Բավրի միջն. դպրոց	18	22	18	6	27	17	30	18	27	20	20	**223**
12	Բուռնաշեթի միջն. դպրոց	9	14	10	15	22	15	11	13	14	13	12	**148**
13	Բուղաշենի միջն. դպրոց	13	11	8	15	9	11	14	9	20	20	18	**148**
14	Վաչիայի միջն. դպրոց	11	8	8	11	11	11	12	16	9	27	27	**151**
15	Վարեվանի միջն. դպրոց	36	33	31	31	31	37	31	33	31	40	41	**375**
16	Գոմանի միջն. դպրոց	12	10	8	9	9	10	16	14	10	13	10	**121**
17	Գիմբիրդայի միջն. դպրոց	25	17	16	15	23	18	26	21	18	25	27	**231**
18	Դաղեշի միջն. դպրոց	39	32	25	32	50	40	48	37	40	22	35	**400**
19	Դիլիսկայի միջն. դպրոց	8	6	9	15	15	41	24	19	17	22	27	**203**
20	Զաքի միջն. դպրոց	30	31	24	31	35	32	39	32	24	42	36	**356**
21	Իխթիլայի միջն. դպրոց	12	10	10	11	13	21	18	15	14	18	15	**157**
22	Կարծախի միջն. դպրոց	12	11	12	20	19	19	25	20	18	27	37	**220**
23	Կարտիկամի միջն. դպրոց	24	14	19	21	12	19	19	18	14	15	15	**190**

№	դպրոց	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	ընդամենը
24	Կորխի միջն. դպրոց	23	22	37	36	19	33	41	34	36	41	46	**368**
25	Կորխինի միջն. դպրոց	8	7	5	7	9	25	16	12	10	16	7	**122**
26	Կոչինի միջն. դպրոց	10	8	11	14	10	13	16	11	12	11	18	**134**
27	Կուլիկամի միջն. դպրոց	22	28	15	21	17	21	31	26	24	18	38	**261**
28	Կիրովականի միջն. դպրոց		6	6	6	5	12	6	8	6	6	7	**68**
29	Լոմատուրծխինի միջն. դպրոց	8	7		4	7	4	5	5	6	7	12	**65**
30	Մաջաղիի միջն. դպրոց	18	14	14	10	18	24	24	29	26	26	21	**224**
31	Մերենիայի միջն. դպրոց	15	12	16	16	13	18	18	35	16	15	17	**191**
32	Օրջայի միջն. դպրոց	12	10	7	7	14	21	16	10	14	21	22	**154**
33	Օլավերդի միջն. դպրոց	15	10	11	14	14	15	23	19	17	21	19	**178**
34	Օկամի միջն. դպրոց	4	3	3	3	3	3	2	5	2	2	2	**32**
35	Մ. Սամսարի միջն. դպրոց	6	2	5	1	4	5	5	11	10	7	7	**63**
36	Փ. Սամսարի միջն. դպրոց	11	5	5	11	14	13	13	9	12	14	7	**114**
37	Սուլդինի միջն. դպրոց	14	16	13	7	12	20	25	27	15	28	35	**212**
38	Տուրցխինի միջն. դպրոց	30	20	18	26	19	24	14	25	12	13	20	**221**
39	Խանդոյի միջն. դպրոց	12	19	15	14	25	17	40	23	30	13	35	**243**
40	Խուլգումի միջն. դպրոց	25	14	15	15	16	16	20	13	16	14	13	**177**
41	Խավեթի միջն. դպրոց	3	10	4	8	14	9	9	7	11	15	7	**97**
42	Խորեյնիայի միջն. դպրոց	11	15	12	17	20	13	11	18	16	14	22	**169**
ընդամենը		**691**	**602**	**583**	**625**	**736**	**798**	**867**	**841**	**757**	**852**	**963**	**8,315**

Ոչ-լրիվ միջնակարգ և տարրական դպրոցներ

№	դպրոց	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	ընդամենը
1	Բալխոյի ոչ-լրիվ միջն. դպրոց	10	10	13	12	11	15	16	13	13			**113**
2	Բուզավեթի ոչ-լրիվ միջն. դպրոց	7	3	5		6		4	3	6			**34**
3	Բոզալեթի ոչ-լրիվ միջն. դպրոց				6	5		3	5	6			**25**

№	դպրոց	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	ընդամենը
4	Գոդոլարի ոչ-լրիվ միջն. դպրոց	12	11	11	12	14	6	8	11	10			**95**
5	Դիլիսկայի ոչ-լրիվ միջն. դպրոց	10	9	10	10	17	13	10	15	10			**104**
6	Կարցեպի ոչ-լրիվ միջն. դպրոց	5	6	4	5	3	5	4	2	6			**40**
7	Կոկիի ոչ-լրիվ միջն. դպրոց	14	9	6	7	9	11	9	9	13			**87**
8	Մարտունիի ոչ-լրիվ միջն. դպրոց	5	8	10	9	5	5	10	7	5			**64**
9	Մոդեգամի ոչ-լրիվ միջն. դպրոց	5	4	3	2	4	4	6	6	4			**38**
10	Մուրջախեթի ոչ-լրիվ միջն. դպր.	13	9	7	10	11	4	4	4	2			**64**
11	Մյասնիկյանի ոչ-լրիվ միջն. դպր.	2	1	1	1	1		5	5	5			**21**
12	Թախչինի ոչ-լրիվ միջն. դպրոց	1	3	1	2	3	2	3		8			**23**
13	Թոտխամի ոչ-լրիվ միջն. դպրոց	3			2	2	1	2	2	2			**14**
14	Ֆիլիպովկայի ոչ-լրիվ միջն. դպր.	1			7	1	4	2	2	3			**20**
15	Չամդուրայի ոչ-լրիվ միջն. դպր.	13	6	9	12	7	7	10	16				**80**
16	Դարվինի տարրական դպրոց	4	5	4	3								**16**
ընդամենը		**105**	**84**	**84**	**100**	**99**	**77**	**96**	**100**	**93**			**838**

Ախալքալաքի շրջանի հայկական դպրոցների աշակերտական կազմի ընդհանուր վիճակագրությունը

	դասարաններ										
	I	**II**	**III**	**IV**	**V**	**VI**	**VII**	**VIII**	**IX**	**X**	**XI**
ընդամենը՝ դասարաններում	**796**	**686**	**667**	**725**	**835**	**875**	**963**	**941**	**850**	**852**	**963**
ընդամենը	**9.153**										

Ախալքալաքի շրջանի հայկական այն դպրոցները, որոնց աշակերտների թվաքանակը չի գերազանցում պայմանականորեն «100 աշակերտ» սանդղակային ցուցանիշը: Դպրոցներից 13 ոչ-լրիվ միջնակարգ են, 5-ը՝ միջնակարգ, 1-ը՝ տարրական: Թեև նշված դպրոցների մեծ մասը ութամյա դպրոցներ են, այնուհանդերձ, վերջիններիս արձանագրած ցածր ցուցանիշների համար ութամյա դպրոցը՝ որպես էական պատճառ, չի դիտարկվում:

№	դպրոց	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	ընդամենը
1	Խավեթի միջն. դպրոց	3	10	4	8	14	9	9	7	11	15	7	**97**
2	Օկամի միջն. դպրոց	4	3	3	3	3	3	2	5	2	2	2	**32**
3	Մ. Սամսարի միջն. դպրոց	6	2	5	1	4	5	5	11	10	7	7	**63**
4	Կիրովականի միջն. դպրոց		6	6	6	5	12	6	8	6	6	7	**68**
5	Լոմատուրծխինի միջն. դպրոց	8	7		4	7	4	5	5	6	7	12	**65**
6	Կարցեպի ոչ-լրիվ միջն. դպրոց	5	6	4	5	3	5	4	2	6			**40**
7	Կոկիի ոչ-լրիվ միջն. դպրոց	14	9	6	7	9	11	9	9	13			**87**
8	Մարտունիի ոչ-լրիվ միջն. դպրոց	5	8	10	9	5	5	10	7	5			**64**
9	Մոդեգամի ոչ-լրիվ միջն. դպրոց	5	4	3	2	4	4	6	6	4			**38**
10	Մուրջախեթի ոչ-լրիվ միջն. դպր.	13	9	7	10	11	4	4	4	2			**64**
11	Մյասնիկյանի ոչ-լրիվ միջն. դպր.	2	1	1	1	1		5	5	5			**21**
12	Թախչինի ոչ-լրիվ միջն. դպրոց	1	3	1	2	3	2	3		8			**23**
13	Թոթխամի ոչ-լրիվ միջն. դպրոց	3			2	2	1	2	2	2			**14**
14	Ֆիլիպովկայի ոչ-լրիվ միջն. դպր.	1			7	1	4	2	2	3			**20**
15	Չամդուրայի ոչ-լրիվ միջն. դպր.	13	6	9	12	7	7	10	16				**80**
16	Բուզավեթի ոչ-լրիվ միջն. դպրոց	7	3	5		6		4	3	6			**34**
17	Բոզալեթի ոչ-լրիվ միջն. դպրոց				6	5		3	5	6			**25**
18	Գոդոլարի ոչ-լրիվ միջն. դպրոց	12	11	11	12	14	6	8	11	10			**95**
19	Դարվինի տարրական դպրոց	4	5	4	3								**16**

Հավելված № 2

Ախալցխայի շրջանի միջնակարգ դպրոցները

№	դպրոց	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	ընդամենը
1	Ախալցխայի թիվ 3 միջն. դպր.	41	54	79	60	50	63	78	74	85	67	47	**698**
2	Սխվիլիսիի միջն. դպրոց	11	22	23	20	20	21	17	24	24	23	26	**231**
3	Սաձելիի միջն. դպրոց	5	6	7	7	8	3	13	8	10	9	7	**83**
4	Ծուղրուդի միջն. դպրոց	10	19	19	12	28	29	29	27	34	32	15	**254**
5	Փ. Պանաճի միջն. դպրոց	7	7	11	11	19	15	17	22	22	19	10	**160**
6	Մ. Պամաճի միջն. դպրոց	6	12	4	11	6	12	9	11	16			**87**
7	Նառխրեբի միջն. դպրոց	7	7	7	6	14	8	16	8	9	10	17	**109**
8	Խղարթբիլայի միջն. դպրոց	4	11	16	8	12	12	13	15	21	23	28	**163**
9	Ծինուբանի միջն. դպրոց	5	8	11	10	11	14	7	12	10	8	8	**104**
10	Օրալի միջն. դպրոց	8	3	7	4								**22**
11	Ծիրայի միջն. դպրոց	5	7	3	8								**23**
12	Ղոիլալիսի միջն. դպրոց	3	3	3									**9**
13	Վալեի թիվ 3 միջն. դպրոց	7	7	10	7	15	12	10	8	8	13	13	**110**
14	Աբասթումանի միջն. դպրոց	2	5	1	7	7	2		4	6	4	3	**41**
15	Խակի միջն. դպրոց	1		2									**3**
ընդամենը		**122**	**171**	**203**	**171**	**190**	**191**	**209**	**213**	**245**	**208**	**174**	**2.097**

Ախալցխայի շրջանի ոչ-լրիվ միջնակարգ դպրոցները

№	դպրոց	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	ընդամենը
1	Ախալցխայի ոչ-լրիվ միջն. դպ	11	7	8	7	10	8	7	11	12			**81**
2	Չեչեռեկի ոչ-լրիվ միջն. դպ	10	2	10	6	8	4	11	6	11			**68**
3	Վալեի ոչ-լրիվ միջն. դպրոց	4		4	4	10		12	10	9			**53**
ընդամենը		**25**	**9**	**22**	**17**	**28**	**12**	**30**	**27**	**32**	**208**	**174**	**202**

Ախալցխայի շրջանի հայկական դպրոցների աշակերտական կազմի ընդհանուր վիճակագրությունը

	դասարաններ										
	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI
ընդամենը՝ դասարաններում	**147**	**180**	**225**	**188**	**218**	**203**	**239**	**240**	**277**	**208**	**174**
ընդամենը	**2.299**										

Ախալցխայի շրջանի հայկական այն դպրոցները, որոնց աշակերտների թվաքանակը չի գերազանցում պայմանականորեն «100 աշակերտ» սանդղակային ցուցանիշը

№	դպրոց	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	ընդամենը
1	Սաձելիի միջն. դպրոց	5	6	7	7	8	3	13	8	10	9	7	**83**
2	Մ. Պամաճի միջն. դպրոց	6	12	4	11	6	12	9	11	16			**87**
3	Օրալի միջն. դպրոց	8	3	7	4								**22**
4	Ծիրայի միջն. դպրոց	5	7	3	8								**23**
5	Ղոիլալիսի միջն. դպրոց	3	3	3									**9**
6	Աբասթումանի միջն. դպրոց	2	5	1	7	7	2		4	6	4	3	**41**
7	Խակի միջն. դպրոց	1		2									**3**
8	Ախալցխայի ոչ-լրիվ միջն. դպ	11	7	8	7	10	8	7	11	12			**81**
9	Չեչեռեկի ոչ-լրիվ միջն. դպ	10	2	10	6	8	4	11	6	11			**68**
10	Վալեի ոչ-լրիվ միջն. դպրոց	4		4	4	10		12	10	9			**53**

Աղյուսակում ներկայացված 10 դպրոցներից մեծամասնություն են կազմում միջնակարգ դպրոցները (7 դպրոց), 3-ը՝ ոչ-լրիվ միջնակարգ։

Հավելված № 3

Ստորև ներկայացվում են Սամցխե-Ջավախք նահանգի շրջանների այն հայկական դպրոցների ցուցակը, որտեղ արձանագրվում են թվաքանակի տեսանկյունից ուսուցանող աշակերտների ամենացածր ցուցանիշները: Աղյուսակում ներառվել է 38 դպրոց, որոնց մեծ մասը՝ Ախալքալաքի շրջանում (16 դպրոց), 11-ը՝ Նինոծմինդայում, 10-ը՝ Ախալցխայում:

Ախալքալաքի շրջանի հայկական դպրոցները

դպրոց	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	ընդհանուր
Կորխինի միջն. դպրոց	8	7	5	7	9	25	16	12	10	16	7	**122**
Լոմատուրծխինի միջն. դպրոց	8	7		4	7	4	5	5	6	7	12	**65**
Կիրովականի միջն. դպրոց		6	6	6	5	12	6	8	6	6	7	**68**
Օկամի միջն. դպրոց	4	3	3	3	3	3	2	5	2	2	2	**32**
Մ. Սամսարի միջն. դպրոց	6	2	5	1	4	5	5	11	10	7	7	**63**
Բուզավեթի ոչ-լրիվ միջն. դպրոց	7	3	5		6		4	3	6			**34**
Բոզալեթի ոչ-լրիվ միջն. դպրոց				6	5		3	5	6			**25**
Կարցեպի ոչ-լրիվ միջն. դպրոց	5	6	4	5	3	5	4	2	6			**40**
Կոկիի ոչ-լրիվ միջն. դպրոց	14	9	6	7	9	11	9	9	13			**87**
Մոդեգամի ոչ-լրիվ միջն. դպրոց	5	4	3	2	4	4	6	6	4			**38**
Մյասնիկյանի ոչ-լրիվ միջն. դպրոց	2	1	1	1	1		5	5	5			**21**
Թախչինի ոչ-լրիվ միջն. դպրոց	1	3	1	2	3	2	3		8			**23**
Թոտխամի ոչ-լրիվ միջն. դպրոց	3			2	2	1	2	2	2			**14**
Ֆիլիպովկայի ոչ-լրիվ միջն. դպրոց	1			7	1	4	2	2	3			**20**
Չամդուրայի ոչ-լրիվ միջն. դպրոց	13	6	9	12	7	7	10	16				**80**
Դարվինի տարրական դպրոց	4	5	4	3								**16**

Նինոծմինդայի շրջանի հայկական դպրոցներ

№	դպրոց	ընդհանուր
1	Ղուլալիսի միջն. դպրոց	**95**
2	Ուչմանայի միջն. դպրոց	**89**
3	Ղաուրմայի ոչ-լրիվ միջն. դպրոց	**63**
4	Կաթնատուի ոչ-լրիվ միջն. դպրոց	**53**
5	Սաղամոյի ոչ-լրիվ միջն. դպրոց	**25**
6	Վլադիմիրովկայի ոչ-լրիվ միջն. դպրոց	**20**
7	Ռադիոնովկայի ոչ-լրիվ միջն դպրոց	**63**
8	Սպասովկայի ոչ-լրիվ ռուս-հայկական միջն դպրոց	**17**
9	Եֆրեմովկայի ոչ-լրիվ ռուս-հայկական միջն դպրոց	**46**
10	Օրլովկայի ոչ-լրիվ ռուս-հայկական միջն դպրոց	**32**
11	Ասփարայի տարրական դպրոց	**16**

Ախալցխայի շրջանի հայկական դպրոցները

№	դպրոց	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	ընդհանուր
1	Սաձելիի միջն. դպրոց	5	6	7	7	8	3	13	8	10	9	7	**83**
2	Մեծ Պամաճի միջն. դպրոց	6	12	4	11	6	12	9	11	16			**87**
3	Օրալի միջն. դպրոց	8	3	7	4								**22**
4	Ծիրայի միջն. դպրոց	5	7	3	8								**23**
5	Ղոիլալիսի միջն. դպրոց	3	3	3									**9**
6	Աբասթումանի միջն. դպրոց	2	5	1	7	7	2		4	6	4	3	**41**
7	Ախալցխայի ոչ-լրիվ միջն. դպ	11	7	8	7	10	8	7	11	12			**81**
8	Չեչեռեկի ոչ-լրիվ միջն. դպ	10	2	10	6	8	4	11	6	11			**68**
9	Վալեի ոչ-լրիվ միջն. դպրոց	4		4	4	10		12	10	9			**53**

Ծալկայի շրջանում գործող հայկական դպրոցներից համապատասխան ցուցանիշով առանձնանում է հատկապես Տամալա-Խարաբա գյուղի դպրոցը, որտեղ սովորում է ընդամենը 7 աշակերտ, որոնց դասավանդում է ընդամենը 1 ուսուցիչ:

Հավելված № 4

Ռազմավարական և միջազգային հետազոտությունների վրացական հիմնադրամը

Պաշտոնական Թբիլիսին տեղեկատվական դաշտում հետևողական աշխատանք է վարում ջավախահայության հիմնախնդիրներն իր օգտին ծառայեցնելու նպատակով: Այս համատեքստում տեղին է հիշատակել Վրաստանում ազդեցիկ «Ռազմավարական և միջազգային հետազոտությունների վրացական հիմնադրամի» *(ՌՄՀՎՀ - «Georgian Foundation for Strategic and International Studies» - GFSIS)* ակտիվ գործունեությունը. Ջավախքի հիմնախնդիրը կենտրոնի գործունեության առանցքային ոլորտներից է:

Հիմնադրամի տնօրենը արևելագետ Ալեքսանդր Ռոնդելին է, որը Էդ. Շևարդնաձեի օրոք աշխատել է Վրաստանի ԱԳՆ-ում: Կենտրոնը ֆինանսավորվում է «Ռենդ» ընկերության, ԱՄՆ պետքարտուղարության, ճապոնական «Սասակավա», Ջորջ Սորոսի հիմնադրամների, կանադական, շվեդական զարգացման գործակալությունների, Ջորջ Մարշալի անվան անվտանգության հետազոտման եվրոպական կենտրոնի, Սթենֆորդի համալսարանի կողմից: Այն ակտիվ մասնակցություն է ունեցել Վրաստանում 2003թ. նոյեմբերին տեղի ունեցած իշխանափոխության կազմակերպման գործում:

Կենտրոնը համագործակցում է Միխայիլ Սահակաշվիլու աշխատակազմի, Վրաստանում Ադրբեջանի դեսպանատան, Ուկրաինայի ՊՆ Գլխավոր սպայակույտի, թուրքական որոշ ազդեցիկ գործարարների և քաղաքական գործիչների, Հայաստանում՝ «Սպեկտրում» ՀԿ-ի (նախագահ՝ Գայանե Նովիկովա) հետ: Հաշվի առնելով հիմնադրամի քաղաքական կշիռը և վերոնշյալ տվյալները՝ կարելի է ասել, որ այն գործում է Վրաստանի «պետական հովանավորչության» ներքո:

ՌՄՀՎՀ-ը մտադիր է իրականացնել Ջավախքի ինտեգրման քաղաքականություն: Ծրագրով նախատեսվում է սեմինար անցկացնելու նպատակով Ջավախքից Թբիլիսի հրավիրել մի խումբ հայ երիտասարդների: Ծրագրի ղեկավարի խոսքերով՝ *«անհրաժեշտ է Ջավախքում ձևավորել նոր վերնախավ, որը բարյացակամ վերաբերմունք կունենա Վրաստանի և վրացիների հանդեպ»*: Այդ նպատակով նախատեսվում է բարձր մակարդակով կազմակերպել հրավիրված ջավախահայ երիտասարդների հանգիստը Թբիլիսիում: Ծրագրի իրականացմանն աջակցելու է Վրաստանի խորհրդարանի պատգամավոր, հայազգի Գիվի Շուգարովը: Մ.Սահակաշվիլու կառավարությունը Ջավախքում աշխատել ցանկացող վրացերենի և վրաց գրականության ուսուցիչների համար սահմանել է ամսական $300 աշխատավարձ:

2004թ. Թբիլիսիում ՌՄՀՎՀ խմբագրությամբ և հովանավորությամբ լույս տեսավ Եկատերինա Մեթրևելու *«Սառեցված լարվածության» դինամիկան. Ջավախեթիայի դեպքը» («The Dynamics of «Frozen Tension»: Case of Javakheti»)* աշխատությունը: Աշխատության առաջին գլխի առաջին նախադասությունում մասնավորապես նշվում է. *«Javakheti is a province in the larger Samtskhe-Javakheti region located in the south-western part of Georgia bordering Turkey and Armenia»*: Տպավորությունն այնպիսին է, որ հեղինակը փորձում է ընթերցողին Ջավախքը ներկայացնել որպես Սամցխե-Ջավախք նահանգի ընդամենը մի փոքր մասը: Ընդ որում, նահանգում ընդգրկված վեց շրջանները դասակարգելիս գերազանցապես հայաբնակ Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջանները հաջորդում են մնացած չորսին, որտեղ վրացիները մեծամասնություն են կազմում:

Ըստ գրքույկի, հայկական սփյուռքի հեռահար նպատակն է միավորել Սամցխե-Ջավախքն Աջարիայի հետ և ապահովել Հայաստանի ելքը դեպի Սև ծով, ինչն, ըստ հեղինակի, աջակցություն էր գտել Աջարիայի նախկին ղեկավար Ասլան Աբաշիձեի կողմից, երբ վերջինս առաջինն էր առաջարկել այդ գաղափարը 1998թ.:

Ըստ ամենայնի, պաշտոնական Թբիլիսին հայ-վրացական պաշտոնական հարաբերություններում Վրաստանը դիտում է որպես դրսի աշխարհի հետ Հայաստանի հաղորդակցության ապահովման կարևորագույն երաշխիքներից մեկը, հետևաբար և երկկողմ հարաբերություններում՝ կարևորագույն ազդեցության լծակ: Այս համատեքստում տեղին է մեջբերել Ե. Մեթրևելու աշխատության այն հաստատումը, թե՝ *«Հայաստանը պետք է լավ հարաբերություններ պահպանի Վրաստանի հետ, որովհետև Վրաստանը կապում է Հայաստանը դրսի աշխարհի հետ»:*

Հավելված № 5

Վիճակագրական տվյալներ ջավախահայության վերաբերյալ

Վրաստանի վարչատարածքային բաժանման համաձայն, Վրաստանը ներառում է 12 վարչական միավոր՝ նահանգ: Սամցխե-Ջավախք նահանգն այդ վարչատարածքային միավորներից մեկն է: Նահանգն ընդգրկում է վեց շրջան, որոնցից երկուսը՝ Ախալքալաքն ու Նինոծմինդան, կազմում են Ջավախքի, մյուս չորս շրջանները՝ Ախալցխան, Բորժոմը, Ադիգենը և Ասպինձան, Սամցխեի մասը: Սամցխե-Ջավախք նահանգն ունի 7 գլխավոր քաղաք, 66 ավան և 250 գյուղ: Թեև Սամցխեի մասը, որտեղ հայերը կազմում են բնակչության ընդամենը 1/3 մասը, տարածքով գերազանցում է Ջավախքի ցուցանիշը (Սամցխեն հաշվվում է Վրաստանի ողջ տարածքի 5.5 %-ը, իսկ Ջավախքը՝3.7%), այդուհանդերձ, ողջ նահանգում վրացի բնակչությունը կազմում է փոքրամասնություն: Սամցխե-Ջավախքում բնակվող վրացիների ընդհանուր թվաքանակն ընդամենը 99.356 է, հայերինը՝ 136.198: Վրացիները մեծամասնություն են կազմում հատկապես Ասպինձայի և Ադիգենի շրջաններում: Ադիգենում հայաբնակ է միայն Ախալցխայի անմիջական հարևանությամբ գտնվող Աբասթուման գյուղը: Պատկերը նույնն է նաև Ասպինձայի պարագայում, որտեղ հայերը համախմբված են բնակվում միայն Ախալքալաքի շրջանին սահմանակից Դամալա գյուղում: Հայերը զգալի թիվ են կազմում նաև Ախալցխայի շրջանում՝ շուրջ 22.310 բնակիչ (վրացիները՝ 31.913): Բացի Ախալցխայի շրջանից, վրացիները մեծամասնություն են կազմում նաև Բորժոմի շրջանում՝ 28.519 բնակիչ, հայերը՝ 3.816 բնակիչ *(տե՛ս Աղյուսակ 1):*

Աղյուսակ 1.

Նահանգի էթնիկ հարաբերակցությունը (Վրաստանի կառավարության վիճակագր. տվյալներ)[1]

շրջան	վրացիներ՝ հազ. հոգի	հայեր՝ հազ. հոգի	այլ ազգություններ՝ հազ. հոգի	ընդամենը՝ հազ. հոգի
Ախալցխա	31.913	22.309	1.245	55.467
Ասպինձա	12.020	2.497	71	14.588
Ադիգեն	22.682	1.122	447	24.251
Բորժոմ	28.519	3.816	5.733	38.068
Ախալքալաք	3.787	71.281	1.122	76.190
Նինոծմինդա	435	35.173	1.293	36.901
Սամցխե-Ջավախք	99.356	136.198	9.911	245.465

[1] Conflict prevention network, Oksana Antonenko, «Assessment of the potential implications of Akhalkalaki base closure for the stability in Southern Georgia», p. 15, September 2001.

Վրաստանի համար Սամցխե-Ջավախք նահանգը և հատկապես Ջավախքը, ռազմավարական նշանակությունից զատ, կարևորվում է նաև բնական ռեսուրսներով։ Նահանգի գլխավորապես հայաբնակ շրջաններում են գտնվում Վրաստանի խոշոր լճերը. Փարվանա լիճը, որն ունի 37.5կմ² և գտնվում է ծովի մակերեսից 2.074մ բարձրության վրա։ Այն սփռված է Ջավախքի և Աբուլ-Սամսար լեռնաշղթաների միջև (Նինոծմինդայի շրջանի հարավային հատված), Սաղամո լիճը (Նինոծմինդա, կենտրոնական հատված), Խանչալի (Նինոծմինդա, հարավ-արևմուտք), Մադաթափա (Նինոծմինդա, հարավային հատված, որը գտնվում է Հայաստանին սահմանամերձ շրջանում)։ Փոքր լճերից են Նինոծմինդայի հարավում գտնվող Բուդդաշենն ու Լևալը, Օոլովկա գյուղի հարևանությամբ գտնվող լիճը։ Ախալքալաքի շրջանում են գտնվում Տաբաղծուր լիճը (հարավային հատված, սահմանակից է Բորժոմի շրջանին), Խոզապին (հարավային հատված, սահմանակցում է Թուրքիային), Պասկիա լիճը (կենտրոնական շրջան)։

Հավելված № 6

Տվյալներ Սամցխե-Ջավախքի հայկական բնակավայրերի վերաբերյալ

Ախալքալաքի և Նինոծմինդայի շրջանների բնակչության ճնշող մեծամասնությունը հայեր են: Ախալքալաքի շրջանն ունի 64 գյուղ, որոնցից 57-ն ամբողջությամբ հայաբնակ են, 5 գյուղերում (Գոգաշեն, Ափնիա, Կոտելիա, Պրտենա և Չունչխա) գերակշռում է վրացի բնակչությունը: Բարալեթի, Մուրջախեթ, Հոկամ և Ազմանա գյուղերում հայերն ու վրացիները խառն են բնակեցված, իսկ Խոսպիա գյուղում գերակշռում է հայ բնակչությունը, թեև բնակվում են նաև վրացիներ ու հույներ: Ախալքալաքի շրջանային կենտրոնում հայերը կրկին բացարձակ մեծամասնություն են կազմում:

Նինոծմինդայի շրջանն ունի 31 գյուղ և մեկ քաղաք՝ Նինոծմինդան: Շրջանի բոլոր գյուղերն էլ, բացառությամբ Գորելովկա գյուղի, որտեղ բնակվում են և՛ հայեր, և՛ էթնիկ ռուս դուխոբորներ, հայաբնակ են: Մեկ այլ՝ Սպասովկա գյուղում հայերի հետ բնակվում են նաև դուխոբորներ ու աջարներ: Անհրաժեշտ է նշել, որ նախկինում Նինոծմինդայի շրջանն ուներ դուխոբորներով բնակեցված 5 գյուղ: ԽՍՀՄ փլուզումից հետո սրանց մեծ մասը հեռացավ Ռուսաստան, որոշներն էլ՝ Կանադա: Ախալցխայի շրջանն ունի 2 քաղաք՝ Ախալցխան և Վալեն, 36 գյուղ, որոնցից հայկական են 15-ը: Սամցխե-Ջավախք նահանգի վարչական կենտրոնը Ախալցխան է:

Ախալցխայի հայկական գյուղերը

1. Աբաթխև (Խաշուտ)	9. Նիոխրեբ
2. Խակ	10. Ճաճարակ (Ճալա)
3. Ծինուբան	11. Ջուլղա (Չիֆթլիկ)
4. Ծիրա	12. Սազել
5. Ծղալբթիլա (Նորշեն)	13. Սուխլիս
6. Ծուղրութ	14. Փոքր Պամաճ
7. Ղուլալիս	15. Օրալ
8. Մեծ Պամաճ	

Հայերը մեծ թիվ են կազմում նաև Բորժոմի, Ախալքալաքի ու Նինոծմինդայի շրջաններին սահմանակից Ծալկայի շրջանում, թեև վերջինս վարչատարածքային բաժանմամբ չի ներառվում Սամցխե-Ջավախք նահանգում: Ծալկայի շրջանն ունի 44 գյուղ: 13-ը հայաբնակ են: 2002թ. տվյալներով՝ շրջանի Նարդևան գյուղում բնակվում էին 400 հայ ընտանիք, ամենամեծ գյուղում՝ Աշխալայում, ավելի քան 700 հայ ընտանիք, Ղզբլքիլիսայում՝ 500: Մյուսները համեմատաբար փոքր գյուղեր են:

Ծալկայի հայկական գյուղերը

1. Այազմա	8. Ղաբուր
2. Աշխալա	9. Ղզրլքիլիսա
3. Բուռնաշեթ	10. Ղուշչի
4. Տամալա-Խարաբա	11. Նարդևան
5. Դաղբաշ	12. Չիֆթքիլիսա
6. Դարագյուղ	13. Օզնի
7. Խաչգեղ	